ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության
Գիտությունների Ազգային Ակադեմիայի

և

Հայաստանի Ամերիկյան Համալսարանի

միջև

գիտական, ակադեմիական, ուսումնական
և մշակույթային համագործակցության

Հայաստանի հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան և Հայաստանի ամերիկյան համալսարանը (այսուհետև անվանվում են Կողմեր), առաջնորդվելով ազգային և համամարդկային արժեքների պահպանման և առաջընթացի բարձր գաղափարներով, ցանկանալով իրենց ավանդը ներդնել Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների ժողովուրդների, Մայր Հայրենիքի և սփյուռքի միջև բարեկամական կապերի ամրապնդման ու զարգացման գործում, հաշվի առնելով, որ գիտությունը իր բնույթամբ միասնական է, արտահայտում են իրենց կոլեկտիվների ձգտումը արդյունավետ համագործակցելու գիտության, կրթության և մշակույթի բնագավառներում:

§ 1

Կողմերը պայմանավորվում են իրականացնել փոխշահավետ համագործակցություն հետևյալ ձևերով.

- գիտաշխատողների և դասախոսների փոխանակում համատեղ հետազոտություններ կատարելու, դասախոսություններ կարդալու ուղղությամբ,
- երիտասարդ գիտաշխատողների, ասպիրանտների, շրջանավարտների և ուսանողների փոխանակում մասնակի ուսումնառության, որակավորման բարձրացման և մասնագիտական փորձառություն անցնելու նպատակով,
- գիտական, գիտա - ուսումնական համատեղ հետազոտությունների կազմակերպում և արդյունքների միացյալ հրապարակում,
- ինֆորմացիոն համակարգչային միացյալ ցանցի ստեղծում,
- միջգրադարանային կապի հաստատման և ընդլայնման վերաբերյալ փորձի փոխանակում, համատեղ տեղեկատվական տվյալների հենքերի ստեղծում,
- միջազգային չափանիշներին համապատասխան գիտական, գիտա-տեխնիկական, ուսումնական, քարոզչական բնույթի պարբերականների ստեղծում և հրատարակում արտասահմանյան երկրներում տարադրամով իրացնելու նպատակով,
- համատեղ փորձարարական և արտադրական արշավախմբերի, բազաների և այլ կառուցվածքների ստեղծում հետազոտությունների կատարման նպատակով,
- հայերեն լեզվով գիտական, ուսումնական և այլ անհրաժեշտ գրականության ստեղծում, թարգմանություն և հրատարակում,
- գիտական նախագծերի, ուսումնական պլանների համատեղ փորձագիտության կազմակերպում, փորձագետների փոխանակում,

- հայ-ամերիկյան պատմական, գիտական, մշակույթային առնչություններին վերաբերվող գիտական հետազոտությունների կազմակերպում,

- համատեղ գիտական նստաշրջանների, բանավեճերի, կոնսուլտացիաների, դասախոսությունների և այլ ակադեմիական միջոցառումների կազմակերպում,

- գիտական, ուսումնական, հանգստի, փորձարարական, տրանսպորտի և այլ հնարավորությունների միացյալ օգտագործման համար պայմանների ստեղծում: Մշակույթային, գեղարվեստական և այլ տիպի համատեղ միջոցառումների անցկացում և այլն:

§ 2

Կողմերը երաշխավորում են իրենց ֆակուլտետներին, ինստիտուտներին, բաժանմունքներին իրականացնել կոնկրետ անմիջական համագործակցություն սույն համաձայնագրի շրջանակներում:

§ 3

Կողմերը կապահովեն § 1 - ում նշված համագործակցության ձևերով զուգընկերոջ ներկայացրած հայտերը, որոնցից յուրաքանչյուրի վերաբերյալ, ամեն կոնկրետ դեպքում, կկազմվեն համապատասխան արձանագրություններ:

§ 4

Կողմերը կապահովեն աշխատանքների կատարման հավասար պայմաններ և կցուցաբերեն օգնություն գիտական սարքավորումների ձեռքբերման հարցում: Օգնության պայմանները կսահմանվեն Կողմերի հատուկ համաձայնագրերի միջոցով:

§ 5

Կողմերը կօժանդակեն իրար հրատարակչական գործում և կնպաստեն իր

երկրում զուգընկերոջ գիտական հանդեսների և գիտական արտադրանքի շահավետ տարածմանը:

§ 6

Սույն համաձայնագրի կատարման, համագործակցման հետագա զարգացման և հսկողության ապահովման նպատակով կողմերը կնշանակեն իրենց իրավասու ներկայացուցիչներին:

§ 7

Համատեղ իրականացված գիտահետազոտական և ուսումնամեթոդական աշխատանքների արդյունքները (հրապարակումներ, հայտնագործություններ, հեղինակային իրավունք և այլն) երկու կողմերի հեղինակային սեփականությունն են: Դրանք երրորդ կողմին տրամադրելու կամ հեղինակային կազմում երրորդ կողմի ներկայացուցիչների ներգրավելու հարցը դիտվում են յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, երկու կողմերի (հեղինակային կոլեկտիվների) համաձայնությամբ:

§ 8

Գիտական և ուսումնա-մեթոդական հրատարակությունների, ուսումնական ծրագրերի, մենագրությունների, պարբերականների, մատենագիտական և այլ տեղեկատու նյութերի փոխանակումը կիրականացնեն կողմերի գրադարանները՝ ինչպես փոխադարձ հայտերի համաձայն, այնպես էլ սեփական նախաձեռնությամբ՝ ըստ փոխադարձ գիտա-ակադեմիական նախասիրությունների, կարիքների և շահերի:

§ 9

Յուրաքանչյուր կողմ կջանա մյուս կողմից ներկայացուցիչներ հրավիրել իր կազմակերպած կարևոր և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող

համագումարներին, կոնֆերանսներին, գիտաժողովներին, հոբելյանական և այլ միջոցառումներին մասնակցելու համար:

§ 10

Կողմերը կջանան փոխադարձ մասնակցություն ցուցաբերել երկու հաստատությունների գիտաուսումնական բազայի տեխնիկական համալրման և ուսուցման տեխնիկական միջոցների կատարելագործման ծրագրերին, ինչպես նաև համակարգչային կապի միացյալ համակարգ ստեղծելու գործին:

§ 11

Սույն համագործակցությունը չի բացառում համագործակցության այլ ձևերի լրացուցիչ իրականացումը և կողմերի ցանկությամբ այն կարող է ընդլայնվել:

§ 12

Կողմերը համաձայնվում են պարբերաբար կազմակերպել համագործակցության կոորդինացիոն հանձնախմբի նիստեր՝ համագործակցության կենսագործման և զարգացման հարցերը քննարկելու նպատակներով, որոնց արդյունքները կվավերացվեն համապատասխան արձանագրություններով:

§ 13

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի և Հայաստանի ամերիկյան հալսարանի միջև համագործակցության սույն համաձայնագիրը կազմվել ու ստորագրվել է երկուական օրինակից՝ հայերեն և անգլերեն լեզուներով, որոնք երկուսն էլ հավասարապես համարժեք են:

§ 14

Կողմերի հասցեները.

Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիա
- Հայաստանի Հանրապետություն, 375019, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24

Հայաստանի Ամերիկյան Համալսարան
- Հայաստանի Հանրապետություն, 375019, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 40

§ 15

Սույն համաձայնագիրը ուժի մեջ կմտնի իր ստորագրման պահից հնգամյա ժամկետով: Եթե համաձայնագրի ժամկետի ավարտից վեց ամիս առաջ կողմերից որևե մեկը գրավոր ձևով չարտահայտի այն չեղյալ համարելու իր մտադրությունը, ապա այն ինքնաբերաբար կերկարացվի հաջորդ հինգ տարվա համար ևս:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ
ՊՐԵԶԻԴԵՆՏ	ՊՐԵԶԻԴԵՆՏ
ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆ	ՄԻՀՐԱՆ ԱՂԲԱԲՅԱՆ

26 հոկտեմբերի 1994 թ.

ք. ԵՐԵՎԱՆ